

**ΥΠΟΥΡΓΕΙΟ ΠΑΙΔΕΙΑΣ, ΑΘΛΗΤΙΣΜΟΥ ΚΑΙ ΝΕΟΛΑΙΑΣ
ΔΙΕΥΘΥΝΣΗ ΜΕΣΗΣ ΕΚΠΑΙΔΕΥΣΗΣ**

ΕΝΙΑΙΕΣ ΤΕΛΙΚΕΣ ΠΡΟΑΓΩΓΙΚΕΣ ΓΡΑΠΤΕΣ ΕΞΕΤΑΣΕΙΣ 2025-2026

Α΄ ΤΑΞΗ ΛΥΚΕΙΟΥ

ΗΜΕΡΟΜΗΝΙΑ: 22 Μαΐου 2026

ΕΞΕΤΑΖΟΜΕΝΟ ΜΑΘΗΜΑ: ΑΡΜΕΝΙΚΑ

Α΄ ΣΕΙΡΑ

ΚΩΔΙΚΟΣ ΜΑΘΗΜΑΤΟΣ: Α012

ΠΡΟΤΕΙΝΟΜΕΝΕΣ ΛΥΣΕΙΣ

ΟΙ ΠΡΟΤΕΙΝΟΜΕΝΕΣ ΛΥΣΕΙΣ ΑΠΟΤΕΛΟΥΝΤΑΙ ΑΠΟ ΟΚΤΩ (8) ΣΕΛΙΔΕΣ

1 ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ ԸՍԲՈՆՈՒՄ ԵՒ ԼԵՉՈՒԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ (30 նիշ)

Ուշադրութեամբ կարդացեք հետևեալ հատուածը եւ պատասխանեցեք հարցումներուն:

<< ՄՈԳԱԿԱՆ ՀԱՅԵԼԻՆԵՐ >>



Սեդրակ կանգ առաւ փողոցին ծայրը: Նոյն զանգին ծանօթ ձայնը կը թրթռար ականջներուն մէջ: Ո՛չ, զգայախաբուրթիւն չէր ինչ որ կը լսէր, ոչ ալ յիշողութեանց խօսուն արծազանգը: Դարոցը դիմացն էր, տասնեակ մը մեթր անդին ու զանգակը կ'օրօրուէր բակը շրջապատող աջ պատին վրայ: Ան նստեցաւ եղած տեղը, առանց քայլ մը եւս յառաջանալու: Ապահով էր դիրքը իբրեւ թաքստոց եւ իբրեւ դիտարան: Ինք կրնար աշակերտներու շարժումներուն հետեւիլ զբօսանքի պահուն եւ մնալ աննշմար:

Խաղացող տղոց պոռչտուքն ու աղմուկը, զանգի դողանջին պէս, իրեն կը հասներ խեղդուած եւ ընդհատ ալիքներով: Դեռ երէկ այդ եռուզեռին մէջ, այդ ալեյոյզ ծովուն մէկ մասնիկը, հիմա դուրս նետուած խլեակ մըն էր ինք, որ իրաւունքն ու համարձակութիւնը իսկ չունի անոր ափունքին մօտենալու: Ներկի սնտուկը եւ ներկերուն չափ թանձր ու տղմուտ կեանքը եկած տեղաւորուած էին իրենց միջեւ:

Չանգակը հնչեց կրկին, աշակերտները խռնուեցան սանդուղին առջեւ եւ յետոյ վեր վազեցին: Սեդրակ տեսաւ թէ ինչպէս անոնցմէ մէկը խելառ ոստումներ կատարեց եւ իր անցքին վրայ տապալեց մէկ-երկու հոգի: Օսնիկն է անպայման, բնաւ չէ փոխուէր,- մտածեց ներկարարը ու ժպտեցաւ: Զիչ ետք բակը պարպուեցաւ դասարաններու դռները փակուեցան իրարու ետեւէ եւ փոթորկուն ձայներու հեռաւոր որոտը լռեց մէկ անգամէն, կախարդանքի մը ուժով կարծես:

Սոսկալիօրէն միևսակ ու տխուր զգաց ինքզինք: Միևսակ, քուած ու հալածական: Բոլոր ընկերները հոն էին քիչ մը անդին, քով-քովի միեւնոյն յարկի տակ: Չարուհին ալ անոնց մէջ էր: Ինք միայն պիտի մնար դուրսը ու սլքտար փողոցէ- փողոց: Աչքերուն դէմ արծանացաւ իր անձը կենդանի ու վառ գոյներով եւ զարմանքով հաստատեց, որ

այդ անձը կը ներկայանար աղքատ տղու մը կերպարանքին տակ, ցնցոտիներ հագած, տոպրակ մը ուսին, դասարանի մը կիսաբաց դուռին առջեւ, տրտմալի նայուածքը ներսի աշակերտներուն յառած: Անդրադարձաւ իսկոյն, որ ականայ ոգեկոչեր էր իրենց դպրոցի սրահին մէջ կախուած նշանաւոր այն նկարը, որուն եղերական խորհուրդին նոր կը թափանցէր, իր իսկ ճակատագրին օրինակով: Նկարի տղուն եւ իր միակ տարբերութիւնը անոր մէջ էր, որ ան մախաղ մը կը կրէր ուսին, իսկ ինք՝ ներկատուփ մը: Բայց երկուքն ալ անհաս կարօտով ստիպուած էին ուսումնարանի դրան մօտենալ եւ գողունի նայիլ անկէ ներս:

<<ՄՈԳԱԿԱՆ ՀԱՅԵԼԻՆԵՐ>> /հատուած/ Մուշեղ Իշխան



Ա- Առաջին երկու պարբերութիւնները կարդալով գրեցէք թէ հերոսը Սեդրակ ու՞ր կը գտնուի եւ ի՞նչ իրականութեան ականատես կ'ըլլայ: Ինչպիսի՞ հոգեվիճակի մէջ է ան: Ձեր պատասխանը հաստատող երկու խօսք հատուածէն գտէք եւ գրեցէք: / 5 նիշ/

Ա- -Սեդրակ կը գտնուի իր նախկին դպրոցին դիմաց, փողոցը:

-Իր թաքստոցէն կը դիտէ դպրոցին բակը, ուր աշակերտները զբօսանքի ելած են:

-Կարօտով կը հետեւի անոնց խաղին ու պոռչտուքին:

-Մեծ կարօտ ունի գտնուելու այդ միջավայրին մէջ:

-Կեանքի դժուար պայմաններու պատճառով դադրած է դպրոց յաճախելէ եւ հոգեպէս կը տառապի այդ զրկանքէն:

Բ- Սեդրակին կեանքին կացութիւնը կ'արտօսէ՞ իր դպրոց յաճախելը: Ձեր պատասխանը հաստատող երկու (2) նախադասութիւններ գտէք եւ գրեցէք հատուածէն: / 5 նիշ/

Բ- -Սեդրակին կեանքին կացութիւնը եւ դժուարութիւնները չեն արտօսեր իր դպրոց յաճախելը:

- Դեռ երէկ այդ եռուգեռին մէջ, այդ ավելոյզ ծովուն մէկ մասնիկը, հիմա դուրս նետուած խլեակն էր ինք:

-Իրաւունքն ու համարձակութիւնը իսկ չունի անոր ասիւնքին մօտենալու:

-Ներկի սնտուկը եւ ներկերուն չափ թանձր ու տղմուտ կեանքը եկած տեղաւորուած էին իրենց միջեւ:

Գ- <<Սոսկալիօրէն մինակ եւ տխուր զգաց ինքզինք>> կը գրէ հեղինակը չորրորդ պարբերութեան սկիզբը: Ինչու՞: Բացատրեցէք ձեր խօսքը: Ապա ըսէք թէ իր դպրոցին պատին եղած տղուն նկարին միջեւ ի՞նչ սմանութիւն գտած է:
(40 բառի շուրջ)/ 8 նիշ/

Գ- -Ինքնուրոյն պատասխան

Դ- Զետեւեալ նախադասութիւններուն մէջ ընդգծուած բառերու տեղ դրէք նոյն իմաստը ունեցող այլ բառեր: / 3 նիշ/

— Նոյն զանգին ծանօթ ձայնը կը թրթռար ականջներուն մէջ:

— Աշակերտները խռնուեցան սանդուղին առջեւ եւ յետոյ վեր վազեցին:

— Աչքերուն դէմ արձանացաւ իր անձը կենդանի ու վառ գոյներով:

Դ- -Կը լսուէր

-Յաւաքուեցան

-Կանգնեցաւ

Ե- Ընտրեցէք ճիշդ բառը եւ դրէք յարմար նախադասութեան մէջ: / 9 նիշ/

Բանաստեղծութեան, պատգամը, կիսկատար, արժէքներուն, հարցադրում,

Զգտումներուն, արիեստագիտութիւնը, սրամիտ, հաղորդական.

Պարոյր Սեւակի Պատգամը

Ի՞նչ կ'արժեն (1) _____, մեքենաները. . . Ահա հարցը, որ Պարոյր Սեւակ կը դնէ (2) _____ մէջ: Մարդուն, մարդկային արժէքներու հանդէպ խոր յարգանքէ, ու անոնց համար ծանր մտահոգութենէ բխող (3) _____ մը:

Այնքան բնական ու (4) _____ բանաստեղծը ուղղակի <<կը խօսի>> համակարգիչներուն: Կողմնակի կ'արտայայտէ իր թերահաւատութիւնը՝ (5) _____ դարձուածքով մը. << Կը հաշուէք հա՛ կը հաշուէք,- կ'ըսէ ան,- իսկ գիտե՞ք հաշուել, թէ. . . >> ու անոնց <<կ'առաջարկէ>> դժուար գործ մը՝ ճշդել մարդկային բաներու արժէքը, ուրիշ խօսքով՝ ծառայել մարդուն եւ մարդկայինին: Մինչդեռ անոնք կը ծառայեն (6) _____ մարդկութեան մը նեղ շահերուն, իշխելու (7) _____, սխալ ու յաճախ վնասակար ծրագիրներուն. . .

Եւ ալ յստակ կ'երեւի Սեւակի (8) _____ :-

Մեքենաներ եւ արհեստագիտութիւն արժէք պիտի ունենային միայն եթէ, փոխանակ վնասելու, նպաստէին մարդկային (9) _____, Մարդու ինքնաստեղծումին. . .

- Ե-
- 1 Արհեստագիտութիւնը
 - 2 Բանաստեղծութեան
 - 3 Հարցադրում
 - 4 Հաղորդական
 - 5 Սրամիտ
 - 6 Կիսկատար
 - 7 Ձգտումներուն
 - 8 Պատգամը
 - 9 Արժէքներուն

* * *

Իմ սիրելի ազգ, քսան-երեսուն տարուց ավելի է որ սիրտս կրակ է ընկել, այրուում է: Ամեն օր մտածում էի մեր կորցրած փառքն ու մեծութիւնը, մեր հիանալի թագաւորաց, իշխանաց գործքը, մեր սուրբ աշխարհի սքանչելիքը, մեր ընտիր ազգի արած աննման քաջութիւնները:

Մասիսը առաջիս կանգնած միշտ՝ մատով ցոյց էր տալիս, թէ ի՞նչ աշխարհքի ծնունդ էմ ես. երազում թէ արթուն՝ դրախտը միշտ մեր Երկրի անունն էր առաջս բերում: Հայկ, Վարդան, Տիգրան, Լուսաւորիչ՝ քնած տեղս էլ ինձ ասում էին՝ ես իրանց որդին եմ: Եւրոպա թէ Ասիա՝ ինձ անդադար ձէն էին տալիս, թէ Հայկայ գաւազն եմ ես, Նոյեան թոռը, Էջմիածնայ որդին, դրախտի բնակիչը:

Ով մէկ լեզու գիտի, ես մէկ-քանիսը գիտեմ. ի՞նչ գիրք ասես՝ չեմ սկսել թարգմանել ու կիսատ թողել. գրաբար շարադրութիւն՝ Էնքան եմ գլխիցս դուրս տուել՝ որ մէկ մեծ գիրք էլ է՛ն կը դառնայ. . .

Միտք էի անում, որ թէ կտրիճ մարդ ասես՝ մեր միջումը հազարաւորներն են Էլել ու Էս օր էլ կան. թէ խելօք խօսք ասես, մեր պառաւներն էլ հազարը գիտեն: Թէ աղ ու հաց ասես, սեր, բարեկամութիւն, քաջութիւն, երեւելի անձինք - մեր գեղըցոց սիրտն էլ լիքն է Էսպէս մտքերով: Առակ, հեքիաթ, սուր-սուր խօսքեր՝ հօ՛ Էն յետին ռամիկ մարդը՝ մէկի տեղակ հազարը կ՛ասի:

<<ՄԱՅՐԵՆԻ ԼԵՉՈՒԻ ՉԷՆՔԸ>> /հատուած/ Խաչատուր Աբովեան

Ա- Գրութեան առաջին մասը կարդալով գրեցէք թէ հայութիւնը 19-րդ դարուն ինչպիսի՞ յարաբերութիւն ունէր գրաբարի հետ: / 6 նիշ/

Ա- -Հայութիւնը 19-րդ դարուն իր արեւելահայ եւ արեւմտահայ հատուածներով ունէր դժուարութիւն հասկնալու գրաբարը:

-Գրաբարը շատոնց անհասկնալի դարձած էր:

Բ- Գրեցէք երկու (2) փաստ որ կ՛իմանաք այս գրութեան սկիզբը, Խաչատուր Աբովեանի մասին: /6 նիշ/

Բ- -Խաչատուր Աբովեան կը սիրէ ժողովուրդին մշակոյթը: Սակայն կը վարանի այդ ուղղութեամբ քայլ առնելու:

-Ան կ'ունենայ վերջապես քաջութիւնը գործնական լուծում տալու հարցին:

-Կը գրէ վեպ մը Երեւանի խօսակցական լեզուով:

Գ- Ի՞նչ է խաչատուր Աբովեանի կարծիքը ընդհանրապես լեզուներու իմացութեան մասին: Հատուածէն գտէք եւ գրեցէք նաեւ խօսքը, որ կը հաստատէ ձեր պատասխանը: / 6 նիշ/

Գ- -խաչատուր Աբովեան կը քաջալերէ տարբեր լեզուներու իմացութիւնը:

-Ով մէկ լեզու գիտի. ես մէկ քանիսը գիտեմ:

-Ինչ գիրք ասես չեմ սկսեր թարգմանել:

Դ- Դուք ինչպե՞ս կրնաք բացատրել տրուած վերնագիրը: Մայրենի լեզուն կարեւո՞ր է սորվին ձեր տարիքի աշակերտներ: Բացատրեցէք ձեր պատասխանը: /60 բառի շուրջ/ / 9 նիշ/

Դ- - Ինքնուրոյն պատասխան

Ե- Հետեւեալ նախադասութիւններուն մէջ ընդգծուած բայերը գրեցէք Անցեալ Կատարեալ ժամանակով: / 3 նիշ/

— Որոշ յառաջադէմ մտաւորականներ կը շեշտէին խօսակցական լեզուով գրելու կարիքը:

— խաչատուր Աբովեան կը սիրէր ժողովուրդի մշակոյթը:

— Ան երկար ատեն կը վարանէր այդ ուղղութեամբ քայլ մը առնելու:

Ե- -Շեշտեցին

-Սիրեց

-Վարանեցաւ

3 ՇԱՐԱԴՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ (40 նիշ)

Ա- Այս տարի ձեր նոր դպրոցին մեջ առիթ ունեցաք հետեւելու Հայերէն լեզուի դասերու: Ձեզի համար ինչպիսի՞ նշանակութիւն ունեցան Հայերէնի դասերը: Գրեցէք ձեր մտածումները եւ զգացումները այս մասին: (140 բառ) /20 նիշ /

Բ- Ներկայացուցէք անձ մը որ ունեցած է կարելոր դերակատարութիւն ձեր կեանքին մեջ: Ինչպէ՞ս կը բացատրէք անոր դերակատարութիւնը: (140 բառ) /20 նիշ /

3 Ա եւ Բ նիւթերով զարգացնել անձնական մտածումները եւ զգացումները:

Իւրաքանչիւր նիւթ 20 նիշ հետեւեալ բաժանումով՝

Ուշադրութիւն դարձուցէք ուղղագրութեան եւ ձեռագիրին մաքրութեան:

ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆ

ΤΕΛΟΣ ΠΡΟΤΕΙΝΟΜΕΝΩΝ ΛΥΣΕΩΝ